

ՊԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆ

Պուշկարինյ	հաւար
Տարեկան	12 Յր
Վեցամսեայ	6 »
Արտասահմանի	
հաւար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Աւերիկայի	հաւար
Տարեկան	3 Տր.
Վեցամսեայ	1.50 »

Մանուցման տոյր առաջին երեսին հաւար 10 ս. իսկ վերջին երեսին հաւար 20 սակրիս է. երեքին աւելի սակրաւերու հաւար 20 Օյո զեղջ կը լայ:

Վառնայի հաւար ձեռք 10 սակրիս

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՊՐԱՎՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՍԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Համակ է գրութի որ կը համարուի ինչպէս հասցիքն .

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjourn“ Varna (Bulgarie)

Արտասահմանի հաւար ձեռք (20 ՍԱՆԹԻՄ) (Պուշկարինյ հաւար ձեռք) (15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք էս չեն տրուիր

«ՇԱՐՇՈՒՄ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿ Է ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՊԱՏՐՔ ՓՈԽԱՆՈՐԴԸ

Վահան վրդ. Տ. Յակոբեան Պուսի հայ կղերականութեան այն ստուարութիւ գասակարգին կը պատկանի, որուն ամբողջ ազգ, գործունէութիւնը սահմանափակուեցաւ պոլսական թաղերու քարոզչութեան թույլ ու մեղկ պաշտօնին գիրքնոյ միօրինակութեան մէջ. Անոնք որ հետաքրքիր եղած են մօտէն ուսումնասիրելու թաղային քարոզչութեան այդ պաշտօնին ամբողջ ախտաձէտ հոգեբանութիւնը, իսկոյն պիտի ըմբռնեն թէ ի՞նչ է տիրական կողմը Պուլկարիոյ պատրք. փոխանորդին նկարագրին. ան իր կրօնական գրեթէ ամբողջ ասպարէզը պտըտած է Պոլսի մէկ թաղէն մէկ կալը, մէկ յուրարկաւորութենէն միւսը, մէկ հարսնիքէն միւսը, մէկ անուան տօնախմբութենէն մէկ կալը, եկեղեցիի սեղաններու բարձունքէն ունայն, անլի, չհատարուած բանաձեւեր տեղադրով միաժամ հաւատարմութեան գլխուն, պոռոտ եւ անիմաստ պերճախօսութեան մը համարը պտըտցնելով ամէնուրեք:

Երիտասարդութեանը, սարկաւակ և յետոյ վարդապետ, Պուսի սէն Երուսաղէմ ու Երուսաղէմէն Պուլիս վարդապետ է այնպիսի պատճառներով զորս աւելորդ կը գտանէք հոս պարզել, շարամբութեան մը կրօնական շնորհը չելու համար: Սա չափը միայն ըսենք թէ այդ երթուղարձը ընդունելի երաշխիք մը չպիտի ըլլար կրօնական ասպարէզը ու է ընդգրկողի: Պուլիսի զանազան թաղերուն մէջ իր վարած քարոզչութեան պաշտօնները երբէք չեն ունեցած «սայնան» կողմ մը. աւանդական տափակութեամբ մը անցած են անոնք: Օսմանիոյ քարոզչութիւնը քիչ մը ազդակալից կերպով վերջացած է. պարզապէս քշուած է անկէջ, որովհետեւ չէր կրցած հայ կղերականի անբասիր կենցաղագի.

տուժեան հաւատարմութիւնը. Պուլիսի թաղը աչքառու առաւելութեամբ մը չփառաւորուեցաւ Տ. Յակոբեանի քարոզչութեան օրով, նմանապէս Ղալաթիոյ թաղը, ուր կը գտնուէր ինք երբ հայկական ուսմանը օրոտացին Օսմ. Պանքային շուրջը:

ՁԾ. ՁԾի յեղափոխական մեծ ազդակալից հեւքին ատենը, Ղալաթիոյ պէս կեդրոնի մը մէջ Վահան վարդապետ չէզոք տարր մը եղաւ, մէկուսի ու վախկոտ և նոյն իսկ բոլորովին անհամակիր այն տենդերուն որոնցմով կը գողցուէր Պուլիսի սալարկները: Ամենին չենք ուզեր արձագանք ըլլալ այն շատ անըպաստ զրոյցներուն, որոնք այն ատենները շրջեցան իր մասին: Անվաւեր պատմութիւններու շարքով մը անձ մը վարկաբեկելու սխտեմը անարդ ու վատագի աւարածներու ժանգոտ զէնքն եղած է միշտ: Ապահովապէս մեք չէ՛ եղած ատ սխտեմը ու չը պիտի ըլլայ երբէք:

Վահան վարդապետ, յամառ հետեւող կարգ մը հայ կրօնականներու ընտրած մեթոտին, չէ ուզած հեռանալ Պուլիսէն, դաւաճական առաջնորդութեանց կենտրոններուն մէջ վատուածալու և յոգնելու վախով: Բաղէչի, Արապկիրի առաջնորդ ընտրուած է, բայց մերժած է երթալ այդ վտանգալից գաւառներու ազգակիցներուն ցաւերը ամբեր: Անգամ մը Երուսաղէմ պիտի երթար, բայց Ռոտուժոցիք, խորագէտ ու հեռատես արդիկ, — հակառակ որ Վահան վարդապետ բնիկ Ռոտուժոցի ըլլայ —, աճապարեցին արիւշ մը ընտրել — ներսէս եպոս. Ասլանեանը —, ինքզինքնին զրկելու համար իրենց հայրենակցին խնամքէն, քաջ ծանօթ անոր նկարագրին: Վերջին անգամ վերջապէս յօժարեցաւ Պուլիսէն երթալ իրրեւ առաջնորդ, պաշտօն մը որ շատ տխուր վախճան ունեցաւ. տեղոյն երկրաշարժի արկածներուն համար հանգանակուած և հոն զրկուած

զուամարներուն մէջ ակներեւ ու ապացուցուած զեղծութիւնը տեղի ունեցան. առաջնորդը մասնակցեր էր այդ զուամարներուն բաշխումին, լայնօրէն, շատ լայնօրէն: Այդ հարցը դեռ անլուծելի մնացած է, և Վահան վարդապետ իր զէմ կանգնած ամբաստանութիւնը չէ յաջողած ջրել: Ենթ. Դարուի քարոզչի էր երբոր Պուլկարիոյ պատր. փոխանորդ ընտրուեցաւ աւելի քան տարի մը առաջ: Մերժումներէ և ձգձգումներէ յետոյ, սպառնալից հրահանգ մը հարկաւոր եղաւ Պուլիս այդ յաւիտենական քարոզչի տեղին շարժելու համար:

Պուլկարիա եկած օրէն ի վեր, միջովայրին և անոր պայմաններուն անձանօթ, Վահան վարդապետ պոլսական սխտեմով սկսաւ գործել: Մենք աղաներու փառաբանութիւններ կարգաց ալ ու ձախ, հանգաւած տեղը: Վրանբաց և մեծխօսիկ յայտարարութիւններ ըրաւ թէ՛ եկեղեցիներու բնէն և թէ իր քով մօտեցողներուն, շլտորցնելու համար միամիտ ամբողջ, որ, սակայն, այնքան ալ տրամադիր չէրեւնար բռնուելու այդ ծուլակին մէջ: Իրր թէ ամբողջ հայութեան աչքը իր վրայ սեւեռուած է եղեր, և իբր թէ ամբողջ հայութեան փրկութիւնը պուլկարահայ առաջնորդութեան հաստատումին կապուած է եղեր!!! Սրատես և պորտաբոլմ, վարդապետը իր պտոյտի միջոցին հասկցաւ թէ Պուլկարիան, առաջնորդական տեսակետով, կոյս մընացած գետին մըն է. արգաւանդ շահագործութեան մը բոլոր կանխադեկոյց նշանները իր աչքին առջեւ պարզուեցան: Պուլկարիոյ ո՞ր մէկ առաւելութիւնը, ազատ երկիր, ուր իսպառ չկան այն վտանգները որոնք հայկական գաւառներուն մէջ մշտամընաց են, զուարճալի կենցաղ՝ Սօֆիաի պէս մայրաքաղաքի մը մէջ, շքեղ կլլմայով և զուլալ ջրով օժտուած, և այս ամէնէն վեր, դրամական առատ վար-

ձատրութիւն, առանց ու է ճիգի, առանց ամէնապղտիկ յոգնութեան, քսակի անդադրում և զգալի պարարտացում համեմատապէս քիչ ժամանակուան մէջ. Եւ այս վերջին պարագան էն յանկուցիչն ու էն կարեւորն է որուն փարած մնայ պատրք. փոխանորդը. վանդի՛ իր նկարագրին ամէնէն ցայտուն կողմը շահամոլութիւնն է, առածի կարգ անցած, առասպելական շահամոլութիւն մը. ասիկա կը խոստովանին նոյն իսկ իր էն սրտակից բարեկամները, ասիկա կը խոստովանի նոյն իսկ ինքը անգիտակցաբար, որովհետեւ պղտիկ մտերմութենէ մը ետքը, վարդապետը գրամի է դըրամ շահելու միջոցներուն վրայ կը ճառէ մեծ եռանդով իրեն մօտեցողներուն հետ:

Իր վառնա բնակութեան միջոցին, ցաւը ունեցանք մօտէն, յօշափելի կերպով տեսնելու իր այս տարօրինակ ու փասակարտկարութիւնը: Առանց վախնալու անգաղանապահութիւն մը գործելու յանցանքէն, ընդհակառակը օգտակար կը սեպենք հոս յայտնել թէ վարդապետը Վահանի թաղային աղքատ պիւտճէին աղէտ մը եղաւ իր տասնըչորս օրուան բնակութեան միջոցին. անիկա ոչ միայն բնակեցաւ, պառկեցաւ ու կերաւ թաղային սնտուկին հաշոյն — ինչ որ անշուշտ իր իրաւունքն էր — այլ եւ կեանքի վայելքները ըմբռնելուց դարձեալ այդ միեւնոյն սնտուկին հաշոյն. ամէն օր կառքով պտըտեցաւ քաղաքն ու շրջակայքս «վայրերը ու կառքին գրամը թաղային սնտուկին վճարել տուաւ. ծով մտաւ, ու ծովին գրամը — 60 փարա — թաղային սնտուկին վճարել տուաւ. իր անձնական տկարութեանը համար դեղ առաւ՝ դրամը սնտուկին վճարել տուաւ. կոշիկները ներկիլ տուաւ ու ծախքը — 20 փարա — դարձեալ միեւնոյն սնտուկին վճարել տուաւ. վերջապէս այդ մարդը՝ վարդապետի մը համար

բու համար հոգեհանգիստներ չպիտու
 արգենք, վասնզի անոնց Ս.
 յիշատակները արգեն սահարներ կա-
 ունցածն մեր սրտերու մէջ, սակայն
 պիտի աշխատինք իրենց սիրած վայ-
 րերուն մէջ իրենց դահիճներէն ող-
 ջակեցնէր մատուցանել, որչափ ալ
 մեր այս արարք բարբարոսական
 ու ոճրագործային լինի, չէ՞ մի որ
 աշխարհի օրէնքը այդպէս է, ի
 բաւուրը միշտ սուրին ծարը:

Անշուշտ ինչպէս շատերու ուշադրու
 թիւնը գրաւած պիտի լինի այն
 դասն գանգաւոր թէ օ. . . նա ալ
 Միսո Շահէնի և Չիթճեանի պէս եղ-
 րայրասպաններու զո՞ւ մէջ. ինչքոս-
 արմէցեացիչ ու յուսահատական դա-
 ւառն իրականութիւն: Որ սա այստոտ
 արտասահմանի շաղաթանութիւննե-
 րը մինչև առաւելեալ Հայրենիք հաս-
 նին ու հոն ալ աւելնեն կը սկսին,
 գասելով իրենց պոռնիքը ամէնէն օգտա-
 կար, ու հարկուներ ալ ժող անձնու-
 էրներէն, զգուսնք այդ բաղդախն-
 զիր ու խաղաղութենուն:

Եղբար, արարական, անխիղճ կայէն-
 ներ, զոնէ խիղճ ունեցէք պարտա-
 կուի մեր աղտոտ միջավայրին մէջ,
 Այսպէս արեւմտ, կ'մտնէք,
 Հայրենիքի ազատութեան համար
 աշխատելը, փոխանակ հոն գործող
 տարրից ոյժ տալու, ամէնէն կարե-
 ուր ոյժերը կը ջրահեք այս ինչ
 դաւաճանութիւններ ու մատու-
 թիւններ են: Արգար և անորակելի
 ու փոխանքի միայն արժանի է մեր
 այնքան հայրենասիրութեան սխ-
 ճեմը: Հազար փոխու հնչակեան Ս.
 դրօշին՝ որն հարիւրներով հերսանե-
 րու Ս. արիւնով սրբազորուած է և
 որն մեր ձեռքերու մէջ սղոտու-
 թեան փայտաւր դարձաւ, առանց բա-
 ցառութեան երկու հատուածից հա-
 մար ալ, Այս անգամ վառնայ այցին
 գործողութիւնը ունեցայ: Չայն Հայ-
 րենեացի մէկ երկու թիւերը աչքէ
 անցնել, ամբողջ հայտնաբերու-
 ցեացորդութիւն մը, յեղափոխական
 օրգան մը չ'ըլլալէ զատ ամէնրան է,
 Ով ազնիւ խմբագրութիւն (եթէ կա-
 րելի է ազնիւ կոչել), ինչու բաւ չ'ի
 համարելիք Ամերիկայի մեր կատարի
 շահատէլութիւնները, ու մինչև
 Կորեոյի ալ անցնողիկ խոզիկ կնճի-
 թը, բայց զոնէ խիղճը ուսած բանին
 նշումը չ'է միայնակ մեր մէջ, հոն մեր
 մատուցութիւնները կեանքեր կը խնն
 և այն ալ ազնիւ կեանքեր: Ինչ սե-
 օր ու արև գոյութիւն տուած են
 մեր ազգայնաս էութեանը, Երբ Չիթ-
 ճեանի և Միսո-Շահէնի վրայ մեր շա-
 ջափազանցութեան հասցուցած կո-
 կորդիտի արցունքները կը թափէք
 ինչո՞ւ դուք զանց անձնուած ազնու-
 ութիւնը չէք ունենար մեր օրգանու-
 վը Գործըրդի նկատմամբ մասնու-
 թիւններ գործելով ինչ են մեր Դաշ-
 նակցութեան դէմ սարգած արշա-
 ւանքները, արգեօք, եղբար, սակայն
 դաւաճան, սոսկալի մակդիրներուն
 իրապէս սրբանաւու համար,
 Չ'կազմէք իմ դաշնակցական մը
 ըլլալու վրայ, եթէ փափաք զգաք
 անցն տալ, ձեզ կսես, մեր յարձա-
 կու մեք ինձ ուղղեցէք, գրածներս
 իմանալականապատ կարծիքներս են,
 որոնք արտասպառութեանը ոչ կրնայ
 գաշակցութիւնը արգելք ըլլալ,
 ոչ հայրակաշնները և ոչ ալ ազգին ա-
 զատարար: մեծ վերակազմակերպ-
 եթէ կը փափաքէք ուրիշ անդրան-
 գանանք, բայց պայմանաւ որ ուրիշ
 տնտեսներու ցեխ չպրտել կամ մատնել
 տեղի չունենայ, հաւատացէք որ սա

վերակազմակերպ մանաւանդ իրար
 գաւած էք: «Շարժումի մէջ Պ. Վար-
 դօի ուղեւալ բաց նամակ մը կար-
 դացի Վ. Հալաճեան» ստորագրու-
 թեամբ, արդարև հիանալի դիրք էք,
 խօսեցէ՛ք, ճառեցէ՛ք, գրեցէ՛ք, քանի
 որ պ. անհու թիւն ունիք քանի որ
 մեր ժողովուրդները «Իրաւունք»
 ներ ու «Չայն վարենեաց»
 ներ ս'ուցանելու զեւ ընդունակ է,
 վասնզի պիտի գայ ժամանակ մը որ
 ըստ մեր հիմնական շահագործած
 նըշանաբանի, մեծ մագրագործու-
 տեղի ունենայ, որով մեր այդ մատ-
 նիչ օրգանները իրենց հետևորդներով,
 պատշաճ տեղը աւելին ու գոյք
 մշակէ՛լ: ական լուրիեան գատապար
 տուիք:

Ալիսի-Որդիգիրդ

SՍՐԵԿՍԻՆ ՀԱՆԴԵՍԻՆ ՄԵՐ
 ԽՕՍԱՅՆԵՐՈՒՆ ԱՌԹԻԻ

(Շար. նախորդ քիւն և վերջ)

Մտաւոր զարգացման բնական օ-
 րէնք մը կայ. տղուն միտքը իսկա-
 րան թոյլ և տկար, հետզհետէ ժա-
 մանակի ընթացքին մէջ կածի ու կը
 զարգանայ բոլոր աստիճանաւ: Եթէ
 զատարարուը ասանց ուշադրութեան
 առնելու այս օրէնքը, յախուռն
 կերպով գործելով, տղուն միտքը կը
 նկատէ պարկ մը, ուր կը ջանայ
 կարելի եղածին չափ շատ կը զգեկու-
 թիւններ լցնել, բնականաբար այս-
 պիտի ընթացք մը առանց ծանր հե-
 տեանքի չի մնար, Չարգացումը
 ծանօթութիւններ ձեռք բերելու մէջ
 չը կայանար. տղուն միտքը զար-
 ցացնելու համար պէտք է քայլ տո-
 քայլ բնութեան հետեւիլ և մտքին
 զարգացման աստիճանին համեմատ
 անոր խորհրդածելու նիթ մատու-
 կարարել: Ո՛չ թէ ուրիշին մտածու-
 ները, ըմբռնումները անոր գոց ընել
 տալ, այլ զայն զրգել իր կարողու-
 թեան հատկապատասխան տարկաներ,
 երկուցիկներ դիտելու և անոնց վրայ
 խորհրդածելու: Հակառակ պարս-
 գային միտքը, պարսաւորուած ըլ-
 լալով իր մէջ ընդունիլ իրեն հաճող
 չը պատճառող և իրեն համար ան-
 հասկնալի ծանօթութիւններ, զըզ-
 ուանք պիտի զգայ իր ախառու-
 թեանէն, իր գործելու եռանդը պիտի
 մարի և վերջ ի վերջոյ ժամանակի
 ընթացքին մէջ բոլորովին պիտի աը-
 կարանայ: Եւ ան ալ պիտի դառնայ
 պարզ մեքենայ մը, պատրաստ ըն-
 դուներու ուղիներու կողմանէ տը-
 բուած ծանօթութիւններ, առանց
 զանոնք մարտելու: Պիտի կորսնցնէ
 իր դիտելու, խորհելու կարողութիւն
 ները. անընդունալի ինքնակամ աշ-
 խատութեան, ինքնուրոյնութեան,
 ինքնավստահութեան բողբոլին պի-
 տի զրկուի:

Մենք այսօր մեր վարժարաններէն
 կը հանենք պատանիներ, որոնք հա-
 յկրէն, պուլկարեթիէն, ֆրանսերէն
 գիտեն, ճերակապական կանոններ
 գոց ըրած են, թուարանական, երկ-
 րաշափական խնդիրներ կը լուծեն,
 բայց ատոնք չեն գիտեր իրենց ան-
 դամները գործածել, աչքեր ունին
 և իրենց շուրջը գիտել սորված չեն
 ինչ որ գիտեն իրենցը չէ, և չեն
 կրնար օգտուել անկէ: Երկար տա-
 իրներ վասնած ըլլալով անբնական
 աշխատութեան մէջ, անոր հետեան
 քով իրենց ուղիքը մաշած, տկարա-

ցած, գործելու եռանդը կորսնցու-
 ցած, կը գեղամակին ու եւ գործու-
 նէութիւն ցոյց տալու:

Այս ամէնը կարծես չը պիտի բա-
 ւէին սղուն միտքը փճացնելու, մենք
 ելած ենք ալ աւելի զարկ մը տալ
 մեր քայքայման գործին, մեր ան-
 տարբեր վերաբերումովը դէպի սղա-
 յոց առողջութիւնը:

«Առողջ միտք առողջ մարմին մէջ»
 առածը ճշմարտութիւն մըն է ամէն
 աստիճան համար: Մարդու հոգին
 կամ միտքը իր պաշտօնը կը կատարէ
 մայմնոյ գործարանաց համեմատ:
 Տկար, վատոյժ մարդ մը մէջ միտ-
 քըն ալ միեւնոյն վիճակով կը ներ-
 կայանայ: Երբ իսկ բնութեանէն ա-
 մենէն աւելի օժտեալ միտքն անպա-
 տկար մամնոյ մը մէջ կայլաւարին եւ
 հիւանդ իմացականութիւններ կը
 դառնան: Եթէ կը հաւատանք որ
 մարդկային այժմու գործունէութեան
 մէջ մեծագոյն զեւ կատարողը միտքն
 է, ուրեմն այդ անսակեղութիւն իսկ
 կարծէ որ մեծ ուշադրութիւն դարձ-
 նենք մարմնոյ առողջութեան վրայ:

Փորձով տեսնուած է թէ գործի մէջ
 յաջողութիւնը մեծաւ մասամբ կա-
 խում ունի այդ գործին ձեռնարկողին
 կորովէն, կամքի ուժէն, աշխատա-
 սիրութեանէն, յարատեւութեանէն,
 իր գործին մէջ յարատեւ չկրնար ըլ-
 լար այն մարդը, որ զնչ մարդու-
 թիւն մը ունի, կորովը, կամքի
 ուժը, աշխատութեան եռանդը ըս-
 տեղծողը կենդանակոսն ոյժն է, ո-
 բուն համար անհրաժեշտ է ունենալ
 լայն թրքեր, առողջ սիրտ, ամուր
 ջիղեր: Ուսումնական մտքեր չեն որ
 կեանքի մէջ կը յաջողին, այլ ա-
 նոնք, որք կը վայելն մեր վերեւ
 թուած առաւելութիւնները, անոնք
 որոնք ձեռներէց, ինքնավստահ, ա-
 պահով իրենց յաջողութեան, կատա-
 զօրէն կը հետամտին իրենց նպատա-
 կին, ու իրենց կուրծքովը ճախայ
 կը բանան:

Այս ամէնը լաւ պիտի աւելնի հան-
 դելը, երբ ուսուցիչներ բնաւ չեն
 զբաղիր աղայոց ֆիզիքականով, ինչ
 պէս որակել այս ընթացքը:

Մանուկը իր մարմնին մաշած մա-
 սելը նորոգելու և միտքամայն
 մարմնով աճելու համար, մեծ քանա-
 կութեամբ մաքուր արեան պէտք ու-
 նի: Երբ քան արեւն ալ մտաւոր
 աշխատութիւնը կը սպառէ, ուսչից
 պիտի գոյանայ աւելն մէջ այդ ուժը,
 ինչոնք շատ քիչ բան գիտեն իրենց
 զաւակները առողջապահիկ կանոն-
 ներու համեմատ հագուեցնելու և
 սնուցանելու մասին: Իսկ վարժա-
 րաններու մէջ շատ քիչ անգամներ
 առողջապահութեան դասեր կը տը-
 ունին: Հապա՛ անոր գործնական մա-
 սը, բոլորովին անտես առնուած է:
 Ոչ ոք հոգ կը տանի սղայոց ընել
 աղայոց բաւականաչափ մարմնական
 շարժումներ, որոնք անհրաժեշտ են
 անոնց մարմինը կազդուրելու: Մարմ-
 նամարդի դասերը իրենց բացակայու-
 թեամբ կը փայլին, կէս օրին հազիւ
 հազ ժամու մը չափ աչիթ կուրենան
 տղայք իրենց անգամները շարժելու,
 այն ալ ըստ դիպաց:

Քանի՞ ուսուցիչներ գտնուած են,
 որ երթան սղայոց խաղերուն մաս-
 նակցին, անոնց աւաջնորդին, ցոյց
 տան խաղեր, որոնք նպատաստոր ըլ-
 լան անոնց մարմնոյն զանազան ան-
 դամները կը թելու: Շատ շատ անկ-
 իւն մը քաշուած կամ կը շաղակրա-
 տեն, կամ լրագիր կը կարդան, և
 ատով հոկողութիւն ըրած ըլլալ կը

կարծեն: Յաճախ ալ երբ դիպու-
 ծաւ ու եւ է խաղի մը մէջ վասնզ
 պատահի, անմիջապէս կարգիւն այդ
 խաղը, առանց անոր սեղ աւելի
 յարմարագոյնը ցոյց տալու:

Աղջկանց վարժարանները ալ աւե-
 ի վատթար խաղով, վաղվզելը
 ամօթ կը համարուի: մանաւանդ քիչ
 շատ շափահաս եղողներու համար:
 Առաւօտէն մինչև երեկոյ, աղտոտ,
 փոշոտ, ապականաձ միջնորոտի մէջ
 մնալ գատապարտուած են:

Ազգային վարժարաններու աշա-
 կերտներէն շատեր աղքատ ճնողնե-
 րու զաւակներ ըլլալով, պէտք և-
 դած մնունքը չեն կրնար առնել:
 շնորհիւ վարժարաններու մաքուր օ-
 գէ եւ մարմնական շարժումներէ ալ
 կը զրկուին. առանց վրայ աւելցու-
 ցէք մտաւոր շափազանց եւ անբնա-
 կան աշխատութիւնը, կրնաք գա-
 դափար մը կապել թէ ինչ պէտք է
 սպասենք մեր վարժարաններէն:

Մեր ամբողջ փորձատեսութեան մի-
 ջոցին սա համոզուած կազմած ենք
 թէ հայ ուսուցչութիւնը երբեք մա-
 քէն չանցնել որ իր ամենափոքր մէկ
 անգամ ընթացքը կրնայ տղու մը
 ապագան խորտակել: Ուսուցիչներ
 իրարու ըրած չեն գիտեր, երբեք
 օր մը հաւաքաբար իրենց խորհրդա-
 ծութեան նիւթ չեն ըրած թէ, այս-
 ինչ տարիք ունեցող աշակերտներ
 որ քանի մտաւոր աշխատութիւն տա-
 նիլ կարող են, և ըստ այնմ որոշել
 իրենց տարիք զատի քանակը: Շատ
 անգամներ պատահած է որ իրարմէ
 լուր չունենալով, ամէն մէկը իր ու-
 զած չափով կը ծանրարեանէ աշա-
 կերտը: Այս վեղջինն ալ կամ զգու-
 լով աշխատութեան բողբոլին յա-
 մառ ծոյլ մը կը դառնայ, կամ ի
 վնաս մարմնոյն իր տարիքէն անհա-
 մեմատ վեր ճիգով կը ջանայ վեր ի
 վերոյ կերպիւ կատարել իր պարտա-
 կանութիւնները, առանց իսկական
 օգուտ մը քաղելու անհնցմէ:

Ֆիզիքական և մտաւորական դաս-
 տարակութեան մէջ մեր հետեւած
 հակաբնական ընթացքը, ցոյց տալէ
 վերջ, աւելորդ պիտի ըլլայ ծանրա-
 նալ բարոյական դաստիարակութեան
 վրայ: Իրենց պարտականութիւնը
 պէտք եղածին պէս յըմբոնող և չը
 կատարող մարդիկ կրնան ու եւ է
 բարոյական ազդեցութիւն գործել
 տղուն վրայ: Բարոյական դաստիա-
 րակութեան համար անհրաժեշտ է
 կատարելապէս համընդհանր և միեւ-
 նոյն մաքուր սկզբունքներէ առաջ-
 նորգող գործունէութիւն մը:

Ո՛չ միայն ուսուցիչներ զիրար կը
 հակասեն իրենց պատուէրներով,
 դրժներով, այլև միեւնոյն անձը
 յատ անգամ, օրուան տարբեր ժամե-
 րուն, տարբեր տրամադրութիւններ
 կուրենայ: Այս ժամուէն պատուէր մը
 կուտայ. յաջորդ ժամուէն իր գոր-
 ծով ինք իր ըսածը կը հակասէ:

Այս մեր ըսածները, հաւանակա-
 նաբար, շատ մեծ դժգոհութիւն պի-
 տի պատճառներ մեր պաշտօնակիցներէ
 ումանց, որոնք թերեւս յաւակնին
 ըսել թէ տիպար ուսուցիչներ եղած
 են, ինքնին չէ որ անշուշտ կը դա-
 տեն, այլ գործէն, Եթէ մենք չը
 խոստովանինք մեր թերութիւնները
 մեր գործերը բարձրագոյն պիտի ա-
 զաղակեն:

Առանց աւելի յառաջ երթալու,
 կը փափագինք նախ մեր յարգոյ
 պաշտօնակիցներուն կարծիքը իմա-
 նալ այս մասին որպէսզի լուրջ վի-

ճարտարական մը մէջ կարենանք փաստերով երևան հանել մեր գործունէութեան խկական արժանիքը :

Հայկ փեշուրգի մը
21 Յունիս 1903
Պալարք

ԹԱՏՐՈՆ

Յառաջիկայ հինգշաբթի գիշեր, Պապական թատերախումբը բնական կերպով «Չամաչքի Գրգը» օրէնքը, թատերասէր հասարակութիւնը անշուշտ պիտի գիտնայ գնահատել Պապականի այս ձեռնարկը :

Պուրկարահայ բնիկ վրայ օրէնքը, թատերական այս զբօսացուցիչ ճիւղը զեռն չէ մշակուած : կատարուած առաջին փորձերը, իրենց ներկայացուցած թերութիւններովը հանգրծած, արժանի են քաջալերուելու մինչև որ կարելի ըլլայ այդ ճիւղին կատարելութեան հասնել : Միայն թէ Պապականի գիտնալով իրեն հանգրցոյց արուած համակրութեան յարգը պարտաւոր է խոյս չտալ աշխատութեան և իր խօստումները ժամանակին կատարելու է :

ԱՊՍՏԱՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԱԿԵԹՈՒՆԻՍՏՆԵՐԸ

Անցեալ անգամ հաղորդեցինք որ ապստամբութիւնը արդէն սկսուած է, և մանրամասնութիւնները կը պահտի որովհետև շատ տեղեր հեռապրակաւ թիւերը կտրուած են :

Այսօր պուրկարական թերթերը հետեւալ մանրամասնութիւնները կը հաղորդեն, որոնք նոյնպէս դեռ իրականութիւնը չեն ներկայացներ :

Ապստամբութեան արժանաւոր պատերազմը վարելու ամար պայակոյտ մը ընտրած են, որուն մէջ կը գտնուի և Պորիս Սարաֆօֆը : Յետոյ երկիրը ապստամբական մասերու բաժնած են ամէն մէկ մասին գործը յանձնելով առանձին առանձին հրամանատարներու :

Ապստամբութեան զըլիստոր շարժումները կատարուելու են հետեւեալ կերպով :

Տրէպոլո գիւղին քով երկու հարիւր ապստամբներ ընդհարում ունեցեր են թուրք զինուորներու հետ : Թուրքերը մեծ կորուստ մը ունեցեր են :

900 հոգի ապստամբներ, փոքրիկ խումբերու բաժնուելով 21 հերկոյնի յարձակուելու են Գրուչէօ քաղաքին վրայ և գրաւել են : Գաղաքին մէջ գտնուած յիսուն թուրք զինուորները սպանել են, ոստիկանը կախիլ են, պահականցը և հեռադատուները այրել են և ուրահի մը տան վրայ կարմիր դրօշակ բարձրացուցեր են, որուն մէջ կողմը գրուած է եղեր : «Ազատութիւն կամ մահ» իսկ միւս կողմը «Ըրէ ժողովուրդ, Աստուած մեզի հետ է» :

Վերջը ապստամբները քաղաքի մօտերը գտնուող ամուր գիրքերը բռնելով աւելի ամրացուցեր են և սպանել են թուրքերու յարձակմանը :

22 ին լուսադէմին 500 թուրք զինուոր կը յարձակին քաղաքը գրաւող ապստամբներու վրայ : քանի մը ժաման կռիւ տեղի կունենայ, սակայն զօրքերը չեն կրնար ապստամբները իրենց գիրքերէն հեռացնել : Մինչև

24ը քաղաքը կը մնայ ապստամբներուն ձեռքը : վերջապէս մեծ քանակութեամբ զօրք կուգայ և արևունհեղ պատերազմէ մը վերջ կը յաջողի քաղաքը հա գրաւել : 150 թուրք զինուոր կսպաննուի : ապստամբները լեռները կը քաշուին, ասոնց կորուստի չափը յայտնի չէ :

Նոյնպէս 21ին մեծ հրոսթիւումներ կերտին Լեռինեան զաչաին մէջ, Ասաղ կոչուած լեռան քովերը : Հրոսթիւումը նըպասակ կունենայ քաղաքին վըրայ յարձակիլ : 23ին կսկսի պատերազմը, որ կը տեւէ մինչև երեկոյ : լուր կայ որ Լեռին քաղաքը ապստամբներէն գրաւուած է :

Մեծ հրոսթիւումներ երեւցեր են նաեւ Ռէսին քաղաքին մօտերը : ապստամբները քաջաբար կը կռուին, տառնց նահանջելու նոյնպէս լուր կը պատի որ ապստամբները տիրացած են Ռէսինի :

Տէպրայի գաւառին մէջ շատ մը գիւղերու արական բնակչութիւնը միացեր է ապստամբներուն հետ, որոնք գրաւած են Տէպր տանող բոլոր ճամբաները, առնալուսներուն յարձակումները արդիւնելու համար :

Թրքական ալբիւրներէ կիմացոյի որ Յէլանիկի վիլայէթին բնակիչները զինուելով լեռներ կը վազեն :

Կոչարէն շատ տեղեկութիւններ չկան : կողմնակի լուրերէ կիմացուի որ ապստամբութիւնը եռուս վիճակի մէջ է : Բայց հետեւեալ զօրքէն Բիթուլիա զրկուել են և տաս թնդանթներու Պօլսէն հրաման արուած է պատրաստ վիճակի մէջ դնել և 24 վաշտ զինուոր :

Թրքական տեղեկութիւններու համաձայն Յունաստանէն յոյն հըրոսթիւումներ եկեր են և ընդհարումներ ունեցեր են պուրկար ապստամբներու հետ : Յոյները մեծ վնասներ կրեր են :

Պիթուլիայի և Իսկիւպի վալիւները խիստ հրամաններ ստացեր են խաղաղութիւնը հաստատուն պահել : Պիթուլիայի մէջ թուրք հրոսթիւումներ ալ երեւան եկած են, որոնց նպատակն է հալածել ապստամբները : Թուրք հրոսթիւումներուն երեւան գալը սպասուածներուն ստիպեր է թուրք զիւղացիները պատժել, որպէս զի տնոնք խաղաղ մնան : Ոյգ պատճառով այրուած են Բամա Լեռա և Տօլէնցի գիւղերը :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Թէեւ թիւրքերը կաշխատին ցուցնել որ Հայաստանի մէջ խաղաղութիւն կը տիրէ և հայերուն վտանգ չի սպառնար, բայց իրո-

յութիւնը այդպէս չի երեւիր : Էրզրումի ուս հիւպատոսը շատ պէշ տեղեկութիւններ արուած է գետպանին և շեշտեր է թէ կարելի է որ շուտով Հայաստանի մէջ մեծ տրիւնհեղութիւններ պատահին :

Էզրումէն ստացուած նամակներէն կերելի որ թուրքերը շատ գրգռուած են հայերուն դէմ : Սմէն կողմերէ տեղեկութիւններ կստացուին որ իշխանութիւնները գաղտնի կերպով զէնք կը բաժնեն քիւրտներուն և զիտմամբ լուրեր կը տարածեն որ հայերը պատմաբար թեան կը պատրաստուին :

«Մանղու մէջի մէջ կը կարգանք որ Զմիւռնիոյ եղեռնագառ ստեանը հետեւեալ պատիմները տուեր է խայրազ կարապետին և պոյաճի Մատուրին ըստ պանման գործին պատճառով ձեր բակալուածներուն : Յմահ տաժանակիւ աշխատանքի դատապարտուած է Յակոբը : 1 ուկէս տարուան բանտարկութեան Միհրանը և սղառ արձակուած է Կարապետը :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Սուլթանի հրամանաւ նոր յանձնաժողովներ կստուած են որոնք կայսրութեան նահանգները պիտի երթան կացութիւնը ուսումնասիրելու և բարենորոգման գործը ապահովելու համար :

Երեկ երեկոյ լուր տարածուեցաւ որ Աստրիական զօրքերը հին Սրպիա մտեր են : Մանրամասնութիւնք կը պահտին :

Պուրկար էքզարքը պալատ հրաւիրուած է որ ժողովուրդին զիմէ պահանջելով խաղաղ մնան : Էկզարքը յայտարարած է որ իրեն չպիտի հնազանդին :

Մուլային պաշտօններէն երկու բաշաներ ձերբակալուած և խիստ հակողութեամբ Արաբիա գացող նա մը տարուած են :

Յունիս 26ին կը հաղորդեն որ Պիթուլիոյ Ռուս հիւպատոս Ռօստկովսկի թուրքի մը ձեռքով սպաննուած է :

ՌՈՒՍԻԱ

Կառավարութիւնը նոր զահաւորներ պատուիրած է :

Գիւլի մէջ գործաւորական խռովութիւններ տեղի ունեցեր են :

ՅՐԱՆՍԱ

Մարտիլիոյ մէջ իտալացի ֆիլթրա անունով մէկը նախարարականին վրայ արձանակ արձա-

կեր է : վերջինիս կառքով գացած միջոցին Ոչոք չէ վերաւորուած, ֆիլթրա ձերբակալուած է :

ԹԱՏՐՈՆ ԻԿԱ

ՀԱՃԻ ԲՍՆԱԲՕ

Ներկայացուին «ՆԱՏԷՃՏՍ» Հայ դերասանական խմբին առաջնորդութեամբ Պ. Լ. ՊԱՊԱՆԱՆԻ :

Սմէն երեկոյ ներկայացմանց շարունակութիւն

Եղեղերգ, Երգեր, պարեր, ժիմնաստիկ եւ ծիծաղաշարժ գօմէտիներ :

Առաջին անգամ ըլլալով պիտի ներկայացուի

«Տօքթօր Ասու» խիստ ծիծաղաշարժ կատակախաղ 3 արտ 1 պատկեր

Գին մօից տոմս 50 սանթիմ
Տղայոց, 25

ԱՐՅԻՆԵՆՆԵՐ ԳԻՇԵՐՈՒԹԻՒՆ ԿՐԹԱՏՈՒՆ

Լօզան, Զուիցերիա

Երկ որդ սարի

Բ. տարեշրջանի գասախօսութիւնները կսկսին Սեպտ 1/14ին

Արեւելեան կամ հայկական կրթատուներ կընդունի 10-20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողքներու բազմաքին համեմատ, գիտական, գրական, առեւտրական կամ արհեստագիտական սոցիոլոլ լուրջ կրթութիւն մը, ներդաշնակօրէն և սերտիւ միացած ազգային հիմնական կրթութեան հետ : Հայ աշակերտներուն կաւանդուին, և այս ուսանց ու է վճարումիս, հայերէն լեզու, հայ մատենագրութեան պատմութիւն, եւայլն : Ընտանեկան կեանք :

Կարելի է նաեւ օգտուել տեղական հանրաձանօթ պարոցներէն : կրթատան տարեթույակը, հակառակ ընծայուած բազմաթիւ բական առաւելութիւններուն, ասորինակ կերպով աման է : կրթատան յայտագիրն ամէն ուղղով կը զրկուի :

ՏՆՕՐԷՆ

Մ. Նարայանեան

Տօքթ. ի գիտութիւն համալսարանական մասնաւոր-ուսուցիչ

Հասցէ՝ Լօզան 4.

Լօզան 4. — Սիւիս

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲՍՏԱՆՈՐԿՆԵՐՈՒՆ

Վերջին անգամ կը յայտարարենք մեր բաժանորդներուն ու շտապեն իրենց բաժնեգրները յանձնել «Հայրենիք» խմբագրութեան, կամ թէ չէ զրկեն մեզի : Բոլոր բաժանորդներուն իրենց հաշիւները լմնցնելու համար երկու ամիս ժամանակ կուտանք, չը վճարողներուն անունները պիտի հրատարակենք քճար ժուճի և «Հայրենիք» մէջ : Խնդրուիր

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница «Взаимность» Варш